338-14
O-88

[1940]

Apm
3-5303a
338.14
O-88

863/93

ԽՍՀՄ Հողագործության
Ժողովրդական Կոմիսարիատ

07 FEB 2018

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈԼԽՈԶԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Инв. № 19373

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿ·ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

18 SEP 2013
30818
54-87
Арм.
3-53032
Гос. Публичная Библиотека в Ленинграде

Հաստատված է ԽՍՀՄ Հողագործության
Ժողովրդական Կոմիսարիատի կողմից
11 փետրվարի 1940 թ.

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ՀՐԱՀԱՆԳ ԿՈԼԽՈԶԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

## I. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Համաձայն գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության 20-րդ հոդվածի, կոլխոզի վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից յերկու տարի ժամանակով, 3-ից մինչև 5 հոգուց՝ նայած արտելի մեծությանը։

Վերստուգիչ հանձնաժողովի կազմը հաստատվում է աշխատավորների դեպուտատների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեյի կողմից։

2. Կոլխոզի վերստուգիչ հանձնաժողովի կազմում կարող են ընտրվել միայն այն անձինք, վորոնք տվյալ կոլխոզի անդամ են։

Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել վարչության անդամները և նրանց մոտիկ ազգականները, ինչպես նաև կոլխոզի պաշտոնակատար անձինք՝ գանձապահը, պահեստապետը, հաշվետարը և տնտեսության առանձին ճյուղերի կամ ոժանդակ ձեռնարկների վարիչները։

3. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են վերստուգիչ հանձնաժողովի նախագահ։

## II. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքներում ղեկավարվում է գյուղատնտեսական արտելի կանոնադրության 18-րդ և 25-րդ հոդվածներով։

Նրա պարտականությունների մեջ մտնում են՝

ա) Անցկացնել վարչության ամբողջ տնտեսական-ֆինանսական գործունեության ստուգումը տարեկան չորս անգամ և անհրաժեշտ դեպքերում ստուգել կոլխոզի առանձին տնտեսական ճյուղերը կամ ձեռնարկները (պահեստը, ֆերման և այլն),

բ) Ստուգել պետական պարտավորությունների ժամանակին կատարումը, ՄՏ Կայանի կատարած աշխատանքի համար մթերային և դրամական վարձատրության մուծումները, կոնտրակտացիոն պայմանագրերի կատարումը, մթերային և դրամական վարկերի վերադարձումը, ինչպես և յեկամտային դրամական հարկերի, ապահովագրական վճարումների մուծումները և այլն։

գ) Ստուգել կոլխոզի մուտքի-յելքի նախահաշվի կատարողականը։

դ) Ստուգել դեբիտորական պարտքերի ժամանակին գանձումը։

յե) Յուրաքանչյուր ամսին ստուգել դրամարկղը։

զ) Ստուգել կոլխոզի արտադրանքի մուտքագրման և ծախսման ճշտությունն ու նրա պահպանումը։

է) Ստուգել կոլխոզի անասունների, շենքերի, մեքենաների, ինվենտարի և այլ գույքի առկա քանակն ու նրանց պահպանումն ու խնամքը։

ը) Ստուգել աշխօրերի ճիշտ գրանցումները, կոլխոզնիկների հետ հաշվարկները և սահմանված աշխօրերի մինիմումի կատարողականը նրանց կողմից։

թ) Ստուգել կոլխոզի ընդհանուր ժողովների տնտեսական ֆինանսական հարցերի վերաբերյալ վորոշումների կենսագործումը վարչության կողմից։

ժ) Ստուգել հաշվառման և հաշվետվության դրվածքը։

ի) Մասնակցել ինվենտարիզացիա անցկացնելու աշխատանքներին։

2. Վերստուգիչ հանձնաժողովն իր նիստերի համար կազմում է արձանագրություններ, իսկ կատարած ստուգումների համար ակտեր։

3. Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքների մեջ հաշվետու յե արտելի անդամների ընդհանուր ժողովին։ Ստուգումների արդյունքների և վարչության ու այլ պաշտոնատար անձանց աշխատանքների վերաբերյալ իր առաջադրանքների մասին զեկուցում է արտելի անդամների ընդհանուր ժողովին։



4. Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի՝

ա) կոլխոզի պաշտոնատար անձերից պահանջել անհրաժեշտ գործերը, մատյանները, փաստաթղթերը ստուգելու համար և բանավոր ու գրավոր բացատրություններ ստանալ նրանցից աշխատանքի վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում վերստուգում կատարելու ժամանակ կոլխոզի վարչության միջոցով հրավիրել հաշվային աշխատակիցներ և այլ մասնագետներ։

բ) Մասնակցել վարչության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով։

գ) Վարչությանն առաջարկ անել հայտնաբերված խախտումները և թերությունները անմիջապես վերացնելու, անհրաժեշտ դեպքերում պահանջելով վարչությունից արտելի անդամների արտակարգ ընդհանուր ժողով հրավիրել։

դ) Ստուգել կոլխոզի ամբողջ պահեստները, ֆերմաները և այլ ձեռնարկները,

5. Վատնումներ և հափշտակում հայտնաբերելու դեպքում, վերստուգիչ հանձնաժողովը վարչության միջոցով միջոցներ է ձեռք առնում գանձելու կոլխոզին հասցված վնասները և մեղավորներին պատասխանատվության յենթարկելու համար։ Անհրաժեշտության դեպքում չարաշահումների փաստերի վերաբերյալ հայտնում է քննչական մարմիններին։

6. Վերստուգիչ հանձնաժողովը չի կարող խառնվել վարչության ոպերատիվ գործունեությանը և փոխարինել արտելի վարչությանը նրա աշխատանքների մեջ։

7. Վերստուգողական աշխատանքներ կատարելու ժամանակամիջոցի համար, վերստուգիչ հանձնաժողովի անդամներին ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող են աշխօրեր գրանցվել հետևյալ չափով՝ վերստուգիչ հանձնաժողովի նախագահին—կոլխոզի նախագահին հավասար, վերստուգիչ հանձնաժողովի անդամներին—արտադրության մեջ նրանց վաստակած աշխօրերի միջինի չափով։ Ստուգումներ կատարելու ժամանակի համար գրանցված աշխօրերի քանակը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից։

## III. ԿՈԼԽՈԶԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

### 1. Մուտքի-ելքի նախահաշվի կատարողականը

*Մուտքի-ելքի նախահաշիվը ստուգելու ժամանակ վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է նախահաշվի յուրաքանչյուր հոդվածը, ինչպես մուտքի մասը, նույնպես և ելքի մասը:*

*Ստուգելով մուտքի և ելքի փաստաթղթերը և գրքերի գրանցումները, պարզում է այդ փաստաթղթերի և գրանցումների ճշտությունը գրքերի մեջ:*

*Ստուգում է, թե ինչպես է կատարվում նախահաշիվը ըստ եկամուտային հոդվածների՝ բուսաբուծությունից, անասնապահությունից, օժանդակ ձեռնարկներից և այլն:*

*Յեթե հայտնաբերվի նախահաշվի առանձին հոդվածների մուտքի թերակատարում, ապա պարզում է թերակատարման պատճառները և կոլխոզի վարչությանն անում է համապատասխան առաջարկներ:*

*Նախահաշվի ծախքի հոդվածներով վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է պետական պարտավորությունների ժամանակին կատարումը, հարկերի վճարումը, ապահովագրական վճարումները և բանկի վարկերի վերադարձումը:*

*Ստուգում է թե վարչա-տնտեսական և այլ ծախսերի նկատմամբ նախահաշվի որևէ հոդվածի խախտում տեղի չի՞ ունեցել արդյոք կամ կոլխոզի վարչությունն ինքնակամ կերպով նախահաշվի մեջ մի հոդվածից մյուսը միջոցների տեղաշարժ չի՞ կատարել:*

*Կապիտալ ներդրումների միջոցների գծով վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է մուտքերի ժամանակին մուծումներն ըստ նախահաշվի ծախսումների ճշտության և պարզում՝ թույլ չի՞ տրված արդյոք գերածախս նախահաշվի ծախքի առանձին հոդվածների գծով:*

### 2. Դրամարկղի դրամական միջոցների ստուգումը

*Դրամարկղի ստուգումը սկսվում է վերստուգիչ հանձնաժողովի ներկայությամբ՝ գանձապահի կողմից կանխիկ դրամի հաշվումով: Հանձնաժողովը եղած կանխիկ դրամի գումարը գրում է ակտի մեջ, որից հետո ստուգում է գանձապահի մոտ եղած փաստաթղթերը, որոնք վերստուգման ժամանակ գտնվում են*



*գանձարկղում և դեռ չեն գրանցված գրքերի մեջ: Յեթե գանձապահի մոտ կգտնվեն փաստաթղթեր, որոնք հանձնաժողովը օրինական չի համարում, ինչպես նաև մասնավոր ստացականներ (թեկուզ ում կողմից էլ նրանք ստորագրված լինեն), հաշվի չեն առնվում և նրանցով տրված գումարները հաշվվում են որպես պակասորդ: Դրամարկղը ստուգելուց հետո գանձապահի գրքերի գրանցումներից դուրս է բերվում մնացորդ գումարը և ստացված մնացորդը համեմատվում է գանձապահի մոտ եղած փաստացի առկա գումարի հետ:*

*Յեթե պարզվի, որ գանձապահի մոտ պահվում են դրամական ազատ միջոցներ, ապա վերստուգիչ հանձնաժողովը առաջարկում է վարչությանն անմիջապես նրանց հանձնելու բանկի ընթացիկ հաշվին կամ խնայողական դրամարկղին:*

*Բացի այդ, դրամարկղի լրիվ փաստաթղթային* (документальный) *ստուգում կատարելիս վերստուգիչ հանձնաժողովը գանձապահի գրքի բոլոր գրանցումները համեմատում է մուտքի-ելքի փաստաթղթերի հետ, սկսած վերջին փաստաթղթային* (документальный) *ստուգման ժամանակից:*

*Այս դեպքում ստուգվում է փաստաթղթերի ճիշտ ձևակերպումը և նրա ժամանակին ստացումը, գրքի մուտքի-ելքի հաշվումների և բոլոր փաստաթղթերի վրայի եղած ստորագրությունների ճշտությունը:*

*Ստուգվում է, թե նախապես մուտքի և դրամարկղային օրդերները համարակալված են թե՞ ոչ, հերթական համարներով բոլոր փաստաթղթերը գրանցվա՞ծ են արդյոք մուտքում, մուտքի և ելքի դրամական օրդերներում գումարը բառերով ցույց տրվո՞ւմ է թե ոչ, կասկած չի՞ առաջացնում դրամ ստացողների ստորագրությունների իսկության և նրանց փաստացի ստացած գումարի մեջ:*

*Գնված գույքի, նյութերի, մթերքների փաստաթղթերը ստուգելիս, վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է արդյոք պատասխանատու անձինք ստորագրե՞լ են գնված իրերն ստանալու մասին, բոլոր գնված իրերը մուտք արվա՞ծ են գրքերով, փաստաթղթերում ցույց տրված գնված իրերի քանակն ու որակը համապատասխանո՞ւմ է ծախսված գումարին:*

### 3. Ընթացիկ հաշվի ստուգումը

*Ընթացիկ հաշիվները ստուգելու ժամանակ վերստուգիչ հանձնաժողովը բանկից կամ խնայդրամարկղից ստացված քաղ-*

վածքները համեմատում է ընթացիկ հաշիվների հաշվառման գրքի գրանցումների հետ։ Կոլխոզի տվյալներով ընթացիկ հաշվի միջոցների մնացորդները և բանկի կամ խնայդրամարկղի քաղվածքների տվյալները պետք է իրար համապատասխանեն։

Յեթե ընթացիկ հաշիվներից կանխիկ դրամ է դուրս գրված, ապա ստուգվում է, թե գանձապահի գրքի մեջ մուտք արված է թե վոչ։

Յեթե ընթացիկ հաշիվներից ծախքեր են կատարված մթերքներ և նյութեր գնելու համար, ապա ստուգվում է թե գնված մթերքները և նյութերը մուտք արված են թե վոչ։

### 4. Կապիտալ ներդրման հաշվի ստուգումը

Կապիտալ ծախքերի համար յեղած միջոցները կոլխոզը պահում է Գյուղ-բանկում (կամ Պետ-բանկում) կապիտալ ներդրման հաշվում։

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է կապիտալ ներդրումների հաշվի միջոցների մուտքի և յելքի գրանցումների ճշտությունը, հաշվապահության գրքերի գրանցումների համապատասխանությունը բանկի քաղվածքների հետ, կապիտալ ներդրման հաշվի միջոցների մնացորդի համապատասխանությունը գրքի գրանցումների միջոցների հետ, պարզում է թե կապիտալ ներդրման հաշվից կանխիկ դուրս գրված գումարները մուտք արված են դրամարկղում թե վոչ և նրանց ճիշտ ծախսումը։ Յեթե կապիտալ ներդրման հաշվից վճարումներ են կատարվում գնված գույքի, շինանյութի և այլնի համար, պարզում է թե նրանք մուտք արված են թե վոչ։

Նույնպես ստուգում է, թե ժամանակին և լրիվ մուծված են կապիտալ ներդրման հաշվին գյուղատնտեսական արտելի կանոնադրության 12-րդ հոդվածի համաձայն անբաժանելի ֆոնդի լրացման համար հատկացված դրամական միջոցները և ուրիշ դրամական մուտքերը, վորոնք մտցվում են այդ հաշվին։

### 5. Հաշվարկների ստուգումը կազմակերպությունների և անձանց հետ

Կազմակերպությունների և անձերի հետ հաշվարկների ստուգումով վերստուգիչ հանձնաժողովը պարզում է, ում պարտք է կոլխոզը (կրեդիտորներ) և ովքեր պարտ են կոլխոզին (դեբիտորներ)։



Վերստուգիչ հանձնաժողովը պարզում է կոլխոզում առաջացած պարտքերի պատճառները և այն միջոցները, վորոնք ձեռք է առնում վարչությունը պարտքերը գանձելու համար։ Այլ կազմակերպությունների հետ կոլխոզի փոխադարձ հաշվարկները ճշտելու համար, վերստուգիչ հանձնաժողովը կոլխոզի վարչության միջոցով կազմակերպություններից ստանում է անձնական հաշիվների քաղվածքները (դեբիտորների և կրեդիտորների)։ Այդ քաղվածքները համեմատում է կոլխոզի գրքերի՝ նույն կազմակերպությունների անձնական հաշիվների հետ։

Յեթե պարզվեն անհուսալի և կասկածելի պարտքեր կոլխոզին, վերստուգիչ հանձնաժողովը հայտնաբերում է մեղավոր անձանց, վորոնք թույլ են տվել պարտքերը ժամկետին չգանձելու և հարցը քննության է դնում վարչության նիստում, իսկ անհրաժեշտության դեպքում քննության է դնում կոլխոզնիկների ընդհանուր ժողովում։

### 6. Աշխորերի ճիշտ գրանցման ստուգումը

Աշխորերի գրանցումների ճշտությունը ստուգելու համար վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է աշխատանքի հաշվառման նախնական փաստաթղթերը (աշխորերի հաշվառման տեղեկագրերը, աշխատանքներ ընդունելու ակտերը, կթի օրագրերը և այլն) ստուգում է թե կոլխոզնիկների անձնական հաշիվներում ու աշխգրքույկներում աշխորերի գրանցումները համապատասխանում են նրաց կողմից կատարած աշխատանքի քանակին և վորակին։

Ստուգում է կոլխոզնիկների ամսվա ընթացքում վաստակած աշխորերի հաշվումների և գրանցումների ճշտությունը նրանց անձնական հաշիվներում և պատին փակցրած ցուցակներում, ցույց տալով նրանց մեջ յուրաքանչյուր կոլխոզնիկի ընթացիկ ամսում վաստակած աշխորերի քանակը,

Տնտեսության առանձին ճյուղերի վրա ծախսված աշխորերի քանակը համեմատում է արտադրական պլանի հետ և պարզում է, տեղի չի՞ ունեցել արդյոք աշխորերի շռայլում։ Կոլխոզի անդամի յուրաքանչյուր հայտարարությունը, աշխորերի վոչ ճիշտ գրանցման մասին, պետք է ստուգվի յերեք օրվա ընթացքում։

## 7. Կոլխոզի անդամների աշխօրերի հաշվարկի ստուգումը

Կոլխոզի անդամների աշխօրերի հաշվարկումների ստուգման ժամանակ, վերստուգիչ հանձնաժողովը պարզում է՝ կոլխոզնիկների վաստակած աշխօրերին հասանելիք մթերքի և դրամի հաշվման ու գրանցման ճշտությունը և ընթացիկ տարում կոլխոզնիկների հետ աշխօրերի վերջնական հաշվարկի ժամանակին կատարումը։

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է՝ աշխօրերին տրվող մթերային և դրամական տեղեկագրերի կազման ճշտությունը, կոլխոզնիկների ստորագրությունները, գանձապահի և պահեստապետի գրքերով մթերք և դրամ ստանալու և դուրս գրելու տվյալները, կոլխոզնիկներին տրվող մթերքների և դրամի գրանցումների ճշտությունը, նրանց անձնական հաշիվներում և աշխգրքույկներում, կոլխոզնիկների վաստակած աշխօրերին՝ արտելի կանոնադրության 16-րդ հոդվածի համաձայն տրվող դրամական և մթերային ավանսները, նույնպես և ողակներին ու անասնապահական բրիգադիրներին տրվող պարգև-հավելումի հաշվման ճշտությունը։

Տարվա վերջում արտելի կանոնադրության 15-րդ հոդվածի համաձայն կոլխոզնիկների հետ ըստ աշխօրերի վերջնական հաշվարկ կատարելիս, վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է աշխօրերի իջեցման կամ բարձրացման ճշտությունը, նայած բրիգադների աշխատանքների ցուցանիշներին։

## 8. Մթերքների և նյութերի ստուգումը

Մթերքների և նյութերի ստուգումը կատարվում է նրանց պահպանելու տեղում՝ պահեստում, ֆերմայում, օժանդակ ձեռնարկներում, բրիգադներում և այլն։

Մթերքների և նյութերի մնացորդը դուրս բերելուց հետո ստուգվում է նրանց պահող պատասխանատու անձի գրքի գրանցումները՝ հաշվետարի գրքի գրանցումների հետ։ Գրքերով առկա քանակը դուրս է բերվում յուրաքանչյուր տեսակ մթերքի կամ նյութերի համար, յեթե գրանցումները և մթերքների կամ նյութերի առկա յեղածը իրար չեն համապատասխանում, վերստուգիչ հանձնաժողովը պարզում է տարբերության պատճառները։

Ստուգման ժամանակ պարզվում է, մուտքի-ելքի փաստաթղթերը ժամանակին և ճիշտ ձևակերպված են պահեստապետի և ուրիշ պատասխանատու անձանց մուտքի-ելքի գրքերում թե ոչ և արդյոք ժամանակին են կատարվում գրանցումները, պատասխանատու անձինք ժամանակին են ներկայացնում փաստաթղթերը վարչության թե ոչ։

Վերստուգիչ հանձնաժողովը՝ ստուգելով մթերքները և նյութերն իրենց պահելու տեղում, միաժամանակ կոնտրոլի յե յենթարկում, թե ապահովված են արդյոք նրանց պահպանման և հակահրդեհային միջոցառումները, պահպանվում են արդյոք մթերքները և նյութերը սահմանված կարգով, ստուգում են կշեռքների և կշռաքարերի ճշտությունը։

Մթերքների մուտքագրման ճշտությունը պարզելու համար վերստուգիչ հանձնաժողովը կատարում է փաստաթղթերի համեմատություն, օրինակ կալսիչից պահեստը մուտք յեղած հացահատիկի վերաբերյալ, ստուգում է համապատասխանում են արդյոք կշռավարի բեռնագրի տվյալները պահեստապետի բեռնագրի տվյալների հետ։

Մթերքների ստուգման ժամանակ վերստուգիչ հանձնաժողովը պարզում է պետպարտավորությունների (վաճառքի) ժամանակին և ճշտությամբ հանձնումը, մթերային վարկերի վերադարձումը, ՄՏ կայանի աշխատանքների դիմաց բնավարձի հանձնումը, կոնտրակտացիոն պայմանագրերով պարտավորությունների ժամանակին և ճշտությամբ կատարումը։

## 9. Առկա գույքի և անասունների ստուգումը

Վերստուգիչ հանձնաժողովն արտադրական հիմնական միջոցների առկա քանակը հայտնաբերում է նրանց պահպանման տեղում (բրիգադներում, ֆերմաներում, օժանդակ ձեռնարկներում և այլն)։ Ստուգում է գույքի պահպանման և անասունների խնամքի պայմանները, պարզում է արդյոք գույքն ակտերով ամրացված է բրիգադներին, ֆերմաներին, օժանդակ ձեռնարկներին, իսկ բրիգադների, ֆերմաների, օժանդակ ձեռնարկների ներսում՝ առանձին կոլխոզնիկներին։ Արտադրական հիմնական միջոցները պահող պատասխանատու անձի մուտքի և դուրս գրման գրանցումները համեմատում է հաշվետարական գրքերի գրանցումների հետ։ Գույքի ամեն տեսակ տարբերությունների՝ ավելցուկի կամ պակասորդի, նույնպես և գրանցումների անհամապատասխանության դեպքում, վերստուգիչ

հանձնաժողովը կոլխոզի վարչության միջոցով միջոցներ է ձեռք առնում վերացնելու հայտնաբերված թերությունները:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է մուտք յեղած և դուրս գրված գույքի փաստաթղթերի ճշտությունը և փաստաթղթերի մեջ ցույց տրված արժեքի համապատասխանելիությունը մուտք արված կամ դուրս գրված գույքի փաստացի արժեքի հետ, նույնպես և մուտք յեղած կամ դուրս գրված գույքի գրանցումների ճշտությունը գրքերի մեջ:

Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է առանձնակի ուշադրություն դարձնել մատղաշների խնամքի և պահպանման և նրանց պատասխանատու անձանց ամրացման խնդրի վրա:

Ստուգելով աճը (ծնունդը) վերստուգիչ հանձնաժողովը պարզում է կենդանիների մատղաշների մուտք անելու համար ժամանակին կազմած ակտերը, նրանց պահպանումը պատասխանատու անձանց կողմից և հաշվետարական գրքերում նրանց ճիշտ մուտք անելու աշխատանքները:

Ստուգում է կոլխոզի գույքի և անասունի դուրս գրման յուրաքանչյուր դեպքը և յուրաքանչյուր դուրս գրման պատճառները:

## IV. ԿՈԼԽՈԶԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Տարվա վերջին վերստուգիչ հանձնաժողովը մասնակցում է ինվենտարիզացիա անցկացնելու աշխատանքներին և անց է կացնում վարչության ամբողջ տնտեսական-ֆինանսական գործունեյության ստուգումը:

Ինվենտարային տեղեկագրերի տվյալները համեմատում է գրքերով դուրս բերված մնացորդի, նրանց պահպանման տեղի և կոլխոզի հաշվետարական գրքերի գրանցումների մնացորդների հետ:

Ստուգելով տարեկան հաշվետվության աղյուսակները համեմատում է տարեկան հաշվետվության քանակական և դրամային տվյալները գրքերի գրանցումների տվյալների հետ:

Տարեկան հաշվետվությունը ստուգելու ժամանակ պարզում է՝

ա) Ճի՞շտ են արդյոք ցույց տրված կոլխոզի մթերային և դրամական յեկամուտները դաշտավարությունից, անասնապահությունից, բանջարաբուծությունից և այլն: Դրա համար տարեկան հաշվետվության տվյալները համեմատում է մթերքները մուտք անելու գրքերի, նույնպես և մթերային ու դրամական յեկամուտների հաշվառման գրքերի գրանցումների հետ:

բ) Ներկա տարվա սկզբին առկա յեղած անասունները համապատասխանում ե՞ն արդյոք ինվենտարիզացիայի գրանցումներին և անասնապահության զարգացման պետական պլանին:

գ) Ճի՞շտ են բաշխված մթերային և դրամական յեկամուտները: Ինչպես է կատարված մուտքի—յելքի նախահաշիվը, հասարակական ֆոնդերին դրամական և մթերային միջոցներ հատկացնելու խնդրում արտելի կանոնադրության խախտումներ չկա՞ն:

դ) Կոլխոզը ժամանակին է՞ կատարում պետության հանդեպ իր պարտավորությունները և Մ. Տ. Կայանի պայմանագրերի պարտավորությունները և ապահովված է՞ արդյոք միջոցները կապիտալ ներդրման հաշվին մտցնելու համար:

ե) Դրամական միջոցների, մթերքների և գույքի առկա քանակը համապատասխանում է՞ արդյոք կոլխոզի բալանսում ցույց տրված տվյալներին:

զ) Կազմակերպությունների և անձերի հետ փոխադարձ հաշվարկների դրությունը:

է) Հաշվարկների դրությունը կոլխոզի անդամների հետ, մթերքների և դրամի առկա քանակն աշխօրերի վերջնական հաշվարկ կատարելու համար:

ը) Առանձնացված սերմի և կերի ֆոնդի առկա քանակը՝ և կոլխոզի պահանջի ապահոված լինելը:

Տարեկան հաշվետվության բոլոր աղյուսակները պետք է համեմատվեն ինվենտարիզացիայի և հաշվապահական գրքերի գրանցումների տվյալների հետ:

Տարեկան հաշվետվության և կոլխոզի վարչության տնտեսական ֆինանսական գործունեյության վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովը տալիս է իր յեզրակացությունը:

Տարեկան վերստուգումների աշխատանքների արդյունքը կոլխոզի անդամների ընդհանուր ժողովին զեկուցելու հետ միաժամանակ վերստուգիչ հանձնաժողովը զեկուցում է նաև իր մի տարվա աշխատանքների մասին:

### 5. Ստուգման ակտ կազմելու օրինակելի կարգը

*Յուրաքանչյուր անգամ ստուգում կատարելիս վերստուգիչ հանձնաժողովն ակտ է կազմում։ Ակտի մեջ ցույց է տրվում՝*

*1. Կոլխոզի անունը.*

*2. Ակտ կազմելու տարին, ամիսը և թիվը.*

*3. Տնտեսության վո՞ր ճյուղի և վո՞ր ժամանակի համար է անցկացված ստուգումը.*

*4. Ո՞վ անցկացրեց ստուգումը և ում ներկայությամբ.*

*5. Կոլխոզի կամ առանձին ճյուղերի աշխատանքների դրությունը.*

*6. Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունը և առաջարկներն անցկացված ստուգման արդյունքների մասին։*

*7. Ստուգման մասնակցող անձանց ստորագրությունները.*

*Ակտն ստորագրվում է ստուգումն անցկացնող և ստուգվող անձանց կողմից։*

*Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացություններին կամ առաջադրանքներին կոլխոզի պաշտոնատար անձը համաձայն չլինելու դեպքում, կարող է իր ստորագրությունից առաջ ծանոթությամբ գրել, ինչի մասին և ինչու համար նա համաձայն չէ։*

Ц 1940 г.
Акт № 4/71
Вкладн. л.



Թարգմանեց՝ Ս. Մխչիֆերչյան
Խմբագրեց՝ Բ. Հովնանյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ոհանյան
Սրբագրիչ՝ Գ. Ջրաղացպանյան

Биз Унху а 509/5402—553 3—40 т. 2050/8
Հայպետհրատի 1 տպարան, Գլավլիտ № Վ 11—57. Պ. 312 Տ. 2050

26 564
Арм
3-53

ՀՀ Ազգային գրադարան
NL0209967

30. 818
Арм
3-5303